

խնդութեամբ մեկուսացեալ՝ դարձեալ զնոյն առնել յաճուսն ի ծնողութիւն, զի ուրախ լիցի Տէր յարարածս իւր եւ փառք ստեղծողին յաւիտեանս մնասցէ: Եւ որ ի գլուխ բանից օրինակ եղի զտազնապ վասն պակասութեան, քանի՛ցս այսու եւ ուրախութիւն լրմանն պատահիցի ի վերայ քո, որով ուրախանայ ծնող ի վերայ որդոյ իմաստնոյ եւ հնազանդի: Զի իւր էր բարերարութեան օրէնք, որպէս եւ աւետարանիչն որ զամենայն տնօրինութիւն Բանին Աստուծոյ ի մերս բնութիւն քարոզեաց՝ ասէ. Եւ էր հնազանդ ծնողաց իւրոց: Եւ արդ որ ի վերայ երկուցդ եղբարցդ մորձից ուրախանայի, խնդալ սկսայ ի վերայ Յովսէփին որբաբողբոջի ձեր եղբարց, յուսալով ոչ միայն ընդ ձեր բարեբախտութեան հասանիլ վիճակի, այլ եւ տեսանէի զօգուած զգայարանացն չափու եւ զմիտս ընդ շարժմանն յայտ բերեալ զզանազան խոհեմութիւն՝ զարմանայի ի գործ իւր յօրինողին: Այսօր զի եւ ի նմանէ քեզ ողջոյն համբուրի աջիդ գրել փութայի, որպէս յերէկն եւ յեռանդն, զհրաժարականն ողջոյն եամեզ ամենից եւ ի բաց բարձաւ, զին գեղեցկազուարթ եւ խոհեմազարդ ի հող ամփոփեցին եւ հողին մաքրափայլ թռեալ սլացաւ լուսեղինաբար օդեալ ի լոյսն անմատոյց, ուստի իջեալ երեւեալն էր զմեօք. փոխանակ համբաւ բարոյ պարարելոյ ոսկերացս՝ գուժք մահու պատեցին զինեւ ոչ միայն հողած սրտիւք՝ այլ եւ զօսկերս իմ մաշէ զօրհանապազ. ոչ միայն համբաւոյ լրոյ ի հեռաստանէ՝ այլ հանդէպ աչաց իմոց պատահեալ թռչիլն թռչնոյն բանականութեան: Զի որ վասն քո թաղծեալ մաշէի ըղձիւք, այսօր եւ ի նմանէ կարօտ մնացի ի խնդալն իմ աւուրս ինչ եւ վախճանն սուգ անհնարին ի սիրտ իմ լցաւ: Զի՞նչ քեզ արժանի գրել զիմ սրտի խռովութիւնս, որ արժանդ ես համբաւոյ խնդութեան, մանաւանդ եթէ յիշողութիւն ճա-